ՓՈՐՁ

ԹԻՒ 1219 — ՇԱԲԱԹ — 1877 ՀՈԿՏԵՄԲԵՐ 15

ԱԶԳԱՅԻՆ

Ասլանեան վսեմափայլ Ստեփան փաշա՝ որ, ինչպէս յայտնի է, տակաւին Վիէննա կդտնուի կայսերական կառավարութեան կողմանէ յանձնարարեալ յատուկ պաշտօնով մը, բարեհաճեր է հետեւեալ նամակը ղրկել մեզ։ Կհրատարակեմք ամենայն սիրով և շնորհակալութեամբ, խնդրելով որ մեր ազգային վարժարանաց պատուարժան Հոգաբարձուք՝ և մեր ազգային մանկաւոյն դաստիարակութեան հոգն ստանձնող ամեն անձինք՝ ուշադրութեամբ կարդան. չէ թէ մէկ այլ քանի՛ մ՚անգամ կարդա՛ն։

Ահաւասիկ։

• • • խմբագիր և սիրելի բարեկամ.

Քանի՛ որ այս տեղ եմ, Աւստրիացւոց դաստիարակութեան եղանակին վերահասու ըլալ փափաքելով, անցեալ շաբթու պարտեզ մանկանց անուանեալ մանր տղոց ծաղկոց մը այցելութիւն ըրի. այս շաբթու մէջ Քաղաքային կամ Հասարակութեան վարժարան ըսուած դասախակրբարան մը պըտտեցայ. վա՛ղն ալ կիմնազ կամ երկրորդական կամ բարձրագոյն ուսումնարան մը տեսնելու պիտի երթամ։

Մտածելով որ սոյն այցելութիւններով ստացած տեղեկութիւններս կրնայ թերեւս օգտակար ըլլալ մեր Ազգին, որոշեցի պատուական լրագրոյդ մէջ զանոնք հրատարակել խնդրել, եթէ պատշաճ կը դատէք. և ահա՛ այսօր կըսկսիմ Աւստրիական պարտեզ մանկանցի նկարագրութենէն։

Իմ այցելութիւն ըրած պարտէզ մանկանցս Եօզէֆշդատ արուարձանի մէջ է. գետնայարկ սրահ մը, առջին մեծկակ պարտէզ, և մէջը ցած նստարաններով և լայնկէկ զրասեղաններով յարդարուած։

Տղայք՝ մանչ, աղջիկ խառն 100 ի մօտ կային. գործակալները 4 անձինք որ են վարժուհի մը, երկու օգնական վարժուհւոյ, և տընտեսուհի մը։ Ասոնց ամենուն ամսականները՝ ինչպէս նաև դպրոցական ուրիշ ծախքերը կը հոգացուին մասնաւոր բարեգործական ընկերութեան մը կողմէն որ հանգանակութեամբ անդամոց և զանազան եղանակաւ նուէր հաւաքելով, նա՛և աշակերտներէն ամիսը 1 ֆիորին (այսինքն 1/2 արծաթ մէճիտիյէ) ամսական ընդունելով, պարտէզին բոլոր ծախքերը կը տնտեսէ։ Բայց Թաղային վարչութիւնն ալ օգնութիւն կընէ այս տեսակ դպրոցներուն՝ եթէ ընկերութիւնը չկարէ բաւել իր ծախուց. և ամեն ժամանակ աղքատիկ ընտանեաց մանկունք ազատ են ամսական վճարելէ։

Ծաղկոցներու վարժուհիք խնամակալ ընկերութեան կողմէն կ՚ընտրուին, բայց ամենն ալ պէտք է վարժուհեաց պատրաստութեան յատուկ վարժարանէ ուսեալ և վկայեալ ըլլան։

Տղայք ևս ընկերութեան միջոցաւ կ՚ընդունուին ի ծաղկոց, անխտիր մանչ և աղջիկ, 2 1/2 տարուէն մինչ ի 6, և միշտ Թաղին զաւակներէն։

Ասոնք ամեն օր ըստ եւրոպացւոց առաւօտեան ժամը 9 ին կը համախմբին, միջօրէին տուներնին կերթան և յետ միջօրէի 2 ին վերըստին կը դառնան ի ծաղկոց և 4 ին կարձակին. կիրակի օրերն ազատ է հարկաւ. շաբաթը երկու օ՛ր ալ ցերեկէն ետև տղայք ծաղկոց վերադառնալէ ազատ են դարձեալ։

Ի՞նչ կուսանին մանկունք այս դպրոցներուն մէջ. — ամեն բան, բայց ո՛չինչ. մինչև անդամ այբուբէն և գիր սովրեցուցանելն արգիլեալ է։ — Տղայք այս տեղ դալ երթալ կսովրին, մէկտեղ ժողվուած՝ ժամանա՛կ անցուցանել կսովրին, մեծի խօսք լսել, լսածին ուշադրութիւն ընել և միտք պահել, տրուած հրամանները կատարել և ճշդիւ և խելոյն կատարել կսովրին. կարգ կանոնով և մինչև անդամ քաղաքավարութեամբ վարուիլ կսովրին։ Ասոնցմէ զատ վարժուհիք պաշտօն ունին մանկանց մարմնական զարդացումն հոգալ, մատղաշ մարմարներին մշակել, և աչքի, ձեռքի, ոտքի ճարտարութեան վարժեցուցանել։ Ասոր համար տղոց նստած տեղերնին և ամենուն մէկանց և զինուորական վարժութեանց տարրական նմանողութեամբ շարժումներ ընել կուտան. ձմեռը սրահին մէջ՝ ամառը պարտէզին մէջ քայլել, վազել և խաղալ կը վարժեցուցանեն. պարտէզին մէջ սերմանել, խոտ քաղել, ծաղկանց փունջ յարդարել կը սովրեցուցանեն. սրահին մէջ տախտակներու վրայ գծեր և պատերուն վրայ պատկերներ ցոյց տալով, զանազան և օգտակար դաղափարներ կը մտցուցանեն տղոց միտքը. պատմութիւններ կ՚ընեն, բնական պատմութեան վերաբերեալ և ամենուն ծանօթ ծաղկանց և կենդանեաց (վարդ, շուն ևն) վրայ նկարագրութիւններ կընեն. մանր առակներ, գողտրիկ ոտանաւորներ, մանր վէպեր բերանացի կսովրեցուցանեն. երգ դաս կուտան, երգ ազգային, հայրենասիրական, մարդասիրական և աստուածային երկիւղի դգացմամբը յօրինեալ. առանձին և հրապարակաւ ճառօրէն բան խօսելու վարժութիւն կընեն, թիւ համրանք կսովրեցուցանեն. կաւով զանազան բաներ կազմելու վարժութիւնք կընեն. փայտի շեղերով երկրաչափական ձևեր, թղթի կտորներով զանազան բաներ (նաւ, կենդանիք ևն), դոյնդդոյն տախտակէ բարակ շերիտներով տեսակ տեսակ գործիք, կարասիք (սէյլէ, թէբսի ևն) շինել կսովրեցուցանեն. թղթի վրայ պատկերներ ասեղով ծակել, թուղթ փակցուցանել, ևն, կը վարժեցուցանեն. աղջիկներուն կար կարել, հիւսուածք ընել և այլ կանացի զբաղմանց սկզբնական վարժութիւն կընեն։

Սոյն վարժութեանց ամենն ալ մասնաւոր օր և ժամանակ ունին, և վարժուհիք ճշդիւ հետեւելով ժամանակացոյցին՝ մանկանց ամենուն մարմնական և մտաւորական դաստիարակութեան խնամք կտանին։

Ասոնց ամենը ես տեսայ աչքով. կրնաս եթէ կամիս հաղորդել դու ալ գրով ընթերցողաց։

Բ. նամակաւ՝ Քաղաքային դպրոցներու վրայ կղրեմ, մնալով միշտ Անձնուէրդ

Ս. Ասլանեան

Կարինէն մէջի ազգայնոյ մը սեպտ. 29 թուով գրած նամակէն՝ հետեւեալ քաղուածը կընեմք։

« Տեղւոյս ազգայնոյ վիճակը գոհացուցիչ չտեսայ. դպրոցին վիճակն առաւել տխուր է. եկեղեցին բաւական պարտուց ներքև ինկած է դպրոցին ծախուց պատճառաւ, բայց յուսացուած արդիւնքը չտեսնուիր։

« Կանցնիմք Մուշ։ Այս քաղաքի ազգայինք քիչ շատ հանգիստ ու ապահով են ի շնորհս քանի մը երևելի տաճիկ դերդաստանաց։ Վսեմ. կառավարիչն խիստ կդովուի մանաւանդ անաչառութեան և արդարութեան մէջ. սակայն իր ձեռք զինուորական զօրութիւն չունի որ զերկիրն ապահովութեան մէջ դնէ։ Ազգային բարոյական յառաջադիմութիւն երբէք չտեսնուիր. դպրոցներն ամենախեղճ վիճակի մէջ են. ո՛չ հարցանող կայ և ո՛չ փնտռող. եկեղեցական կարգեր և ծամացասութիւններ խանդար և աղաւաղեալ. ո՛չ դպիրն յայտնի է և ո՛չ դպրապետ. ամեն ինչ գռեհիկ և գեղջկական պատկեր մը կներկայացուցեն։ Այս տարի 220 ոսկւոյ առաջնորդարան մը առնուեցաւ. դինը ըստ բաւականին հաւաքուեցաւ քաղաքներէն և գիւղերէն. բայց դեռ վճարուած չէ և ոչինչ, և կկասկածուի թէ ետ պիտի առնուի։ Կլսուի, որ Առաջնորդ Սրբազանն այս օրերս գիւղերն ելած է արտաքոյ կարգի հանգանակութիւն մ՚ալ ընել, և բաւական ալ կյաջողի եղեր. բայց չկըրցանք հասկնալ թէ այդ հանգանակութիւնը ի՞նչ բանի պիտի ծառայէ։ Առաջնորդական տուրքերն՝ այս ընդարձակ վիճակին նայելով՝ ըստ բաւականին առատ են։ Մուշն այսօր ո՛չ օրինաւոր քաղաքական ժողով, ո՛չ տնտեսական խորհուրդ, ո՛չ ազգային սնտուկ, ո՛չ համարատուութիւն և ո՛չ համարառութիւն ունի. ի՛նչ կերթայ, և ի՛նչ կուգայ, ո՛չ ոք գիտէ բաց ի Առաջնորդէն։

« Զմոռնանք, քանի մը խօսք ալ Մշոյ հռչակաւոր վանուց վրայ ըսել։ Ազգն երկար ժամանակ այս վանքի խնդիրներով զբաղեցաւ, խորհեցաւ, տնօրինեց, վճռեց և յուսաց թէ քիչ ժամանակի մէջ իր աշխատութեան արդիւնքը պիտի տեսնէ և իր ակնկալութիւնք պիտի պըսակուին. սակայն դարձեալ այդ վանքն նոյն է, ի՛նչ որ էր ասկէց 10–15 տարի յառաջ։ Վարչութիւնն կկարծէ, թէ վանահայրեր փոփոխելով պիտի յաջողի իր ակնկալած բարեկարգութիւնն յառաջ վարել և արդիւնքներ տեսնել. սակայն կսխալի. վարչութիւնը դեռ ևս չէ կըրցած ի մօտոյ խելամուտ լինել և հասկընալ թէ այս վանքի միաբանութեան իւրաքանչիւր անհատ ի՛նչ յատկութիւն, ձիրք և բնաւորութիւն ունի. ի՛նչ է նոցա իւրաքանչիւր ուրուք դաղափարն ու կարողութիւնը. ի՛նչ բանի ձեռնհաս են և ի՛նչ կերպ ծառայութեան յարմար կուգան։ Եթէ վարչութիւնն հաւատարիմ և անաչառ քննութեան մը միջոցաւ անդդալի կերպով քննէ և հասկնայ, անշուշտ պիտի խելամտի, որ այդ միաբանութիւնը կարող չէ ակնկալեալ բարեկարգութեան և ուսումնական յառաջադիմութեան գործի լինել. անոնք այնպէս համոզուած են որ վարդապետու-

թեան աստիճանին բարձրացողն յառաջ պիտի գայ մշակական ստորին ծառայութիւններէ և ո՛չ թէ դպրոցներէ. այսօր եթէ մէկ քանի ընծայացուներ դուրս գան այդ վանքի ուսումնարանէն, գըրեթէ ընդհանուր արհամարհանաց և հալածման առարկայ կլինին։ Ցանցանքնին դպրոցական լինելն է։ Ուստի Վարչութեան առաջին պարտքն է՝ առ այժմ այդ վանքէն ըստ օրինի բարեկարդեալ դպրոց և ընծայարան պահանջել և ո՛չ այլ ինչ. այո՛, ընծայարան, որ օրինաւոր եկեղեցական, վարդապետ, քահանայ և վարժապետ լինելու կրթութիւն տայ ուսանողաց. և բոլոր միաբանութեան ճիգն ու ուշադրութիւնը այդ դպրոցի և ընծայարանի վրայ հրաւիրելու և կեդրոնացուցնելու է։ Եթէ այս ըսածս յառաջ գնաց՝ անշուշտ տպարանի գործադրութիւնն ալ կյաջողի. ապա թէ ոչ՝ ուտելու, խմելու և քնանալու համար վարդապետներ միշտ պիտի ունենայ Ազգն այդ վանքին մէջ։»

«Ահաւասիկ, այսպէս դեռ անլոյծ կայ և մնայ Մշոյ վանքի յառաջադիմութեան խնդիրը. տղա՛յ էինք մենք, կա՛ր այս խնդիրը. դէպ ի ծերութիւն կերթանք, և տակաւին ո՛ւր որ էր այդ վանքը, դարձեալ հոն է։ Պատրիարքարանէն կխնդրեմք, որ ծագիւ մատին չմերձենայ այս ծանր խնդրոյն. կարգադրելու համար ամենայն զօրութիւն ի գործ դընելու է, վհատելու չէ, և ամեն խոչ ու խութ արհամարհելով՝ այդ վանքը օգտակար ու շահաւոր վիճակի մէջ դնել պէտք և պարտք է։ Գիտէ Պատրիարքարանը, թէ այս օրերս ի՛նչ անցքեր կանցնին այդ վանքին դլխէն և վանահայր և միաբանութիւն այժմ ի՛նչ աչքով կնային մէկմէկու վրայ։

«Պատերազմական գործողութիւնք շաբաթէ մ՚ի վեր սկսուած են Կարսի բոլորտիքը, և Ահմէտ-Մուխթար փաշայի բանակին վրայ այլ և այլ զրոյցներ կան, որք չափազանցութիւններ կկարծուին։ Այսու հանդերձ սա ստոյգ է, որ երկու կողմանէ բուռն ճիգ մը կթափուի. ռուսաց բանակն արդէն յարձակողականի ըսկըսած է, ինչպէս Կարսայ և Արտահանի կողմերէն, նոյնպէս Պայազիտի կողմէն ալ։ Այսօր կամ վաղ վճռական ճակատամարտներու լրոց անհամբեր կսպասուի»։

Իւսկիւտարի Եէնիմահալլէի վարժարանին բարձրագոյն կարգի աշակերտուհիներէն՝ աշնիւ օրիորդ Զապէլ Յ. Խանճեան՝ Ս. Պատրիարք Հօր կենդանագիրը (մէկուկէս կանգուն երկայնութեամբ և մէկ կանգուն լայնութեամբ) գծելով, Նորին սրբազնութեան նուիրեր է։

Ս. Պատրիարք Հայրը գոհունակութեամբ ընդունելով՝ բարեհաճեր է ինքնագիր նամակ մ՚ուղղել առ օրիորդն, և քաջալերտալ՝ գովելով այս կարևոր գեղարուեստին մէջ ունեցած յառաջադիմութիւնը։

Օրիորդ Զապէլի գծագրական գործերը տեսնող արուեստագէտ ազգայինք կվկայեն, թէ եւրոպական շքագրամներու իսկ արժանի է։

Գծագրութեան կարևորութեան վրայ բաղմիցս երկարօրէն խօսած ըլլալով, այս անգամ կրկնել աւելորդ կհամարիմք. սակայն անհրաժեշտ պարտք կհամարիմք մեզ՝ այս առթիւ իսկ շնորհակալութիւն մատուցանել Լինքսէրճեան Յելեմակ և Եաղըճեան Սիմոն էֆէնտիներու, որոնք մեր ազգային վարժարանաց մէջ գծագրութեան դեղեցիկ և օգտաշատ արուեստն յառաջ տանիլ կաշխատին, սոյն ճիւղին դասատուութիւնը ընելով։

—

Հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութեան կողմանէ շնորհակալութեամբ կհրատարակուի, թէ Զմիւռնիոյ ազգայիններէն մեծ. Սպարթալեան Յակոբ և Յովհաննէս էֆէնտիներն՝ որք իրենց բարեգործութեամբքն արդէն ծանօթ են ազգայնոց, այս անգամ տասը հատ հարիւրնոց թղթադրամ շնորհեցին ի նպաստ խղճալեաց ազգային Հիւանդանոցի։

Արդարև, Սպարթալեան եղբարք այս օրերս առաւել բարձր ի գլուխ կը հանդիսանան, թէ՛ Զմիւռնիոյ մէջ իրենց ձեռնարկած մեծագործութեամբն, և թէ՛ ուրիշ առաքինական արարքներով. և միանդամայն նախանձելի օրինակ կընծայեն մեր ձեռնհաս ազգայնոց,

---

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հաշտութեան վերաբերեալ ստոյգ տեղեկութիւններ կորոնեմք՝ մեր ընթերցողաց հաղորդելու համար. բայց դժբաղդաբար չեմք գտներ։ Այլ և այլ կողմերէ լուր կը տրուի, թէ եւրոպական կառավարութիւնք՝ Պոլսոյ և Բեղրսպուրկի մէջ գտնուող իրենց ներկայացուցչաց հրահանգ ղրկած են՝ հաշտութեան համար միջնորդել և ամեն ջանք ընել. սակայն դժբաղդաբար չեն յաջողիր, որովհետև երկու պատերազմող տէրութիւնք ալ դեռ եւս պինդ և յամառ կեցած են, և ո՛ր և է զիջում յանձն չեն առնուր։ Այսու ամենայնիւ, եւրոպական կառավարութիւնք տակաւին կաշխատին, և Պոլսոյ մէջ Բ. Դրան հետ դեսպանաց այս օրերս յաճախ տեսութիւնք՝ այս նպատակին կընծայուի։

Բայց, տեղի ունեցած պատերազմաց և պատերազմական պատրաստութեանց լուրերով լի՛ են տեղական և օտար լրագիրք։ Ընդարձակ և մանրամասն տեղեկութիւններ կուտան ամեն օր՝ պատերազմին շարունակութեան համար երկուստեք եղած պատրաստութեանց ու ղօհողութեանց վրայ։ Ամեն օր մեծաւ կարեւորութեամբ կխօսուի փոքրիկ իշխանութեան մը՝ Սերվիոյ վրայ։ Ըստ ոմանց՝ հաստատապէս որոշեր է Սերվիա, առաջիկայ ամսոյն սկիզբները պատերազմին ասպարէզը դտնուիլ, բնաւ ականջ չտալով՝ Անգղիոյ և Աւստրիոյ կողմանէ եղած խրատուց ու աղդարարութեանց, և բնաւ չյիշելով վերջին պարտութիւնն ու աղէտքը։ Ռուսիա ապահոված է զգ Սերվիա՝ ծախուց կողմանէ. բոլոր պատերազմական ծախքը պիտի վճարուի ռուսական դանձէն. արդէն մեծադումար դրամ Ռուսաստանէն Սերվիա ղրկուած է և հետզհետէ ալ պիտի ղրկուի։

Կհաւաստեն, թէ Սերվիա այժմ ամեն օր զօրք, զէնք և պարէն ու պաշար կիջեցունէ օսմանեան սահմանագլուխը։ Կայսերական կառավարութիւնն ալ անտարբեր կեցած չէ. մէկ կողմանէ ամենայն խստութեամբ կհարցունէ Սերվիոյ իշխանութեան, պատերազմական պատրաստութեանց պատճառները. իսկ միւս կողմանէ, ինչպէս դրուած է Պօսնայէն, անդադար զօրք կղրկուի Սերվիոյ սահմանները։ Պօսնայի մէջ, 150ի չափ երեւելի և մեծատուն անձինք, նոյն իսկ կուսակալին որդին, կամաւոր դրուեր են. և ժողովուրդը զօրաց պիտոյքը և դրամ մտադիր կնուիրէ եղեր։

Գարատաղի վրայ նոր տեղեկութիւն մը չկայ։ Ըստ ոմանց, գարատաղցիք չբաւականանալով մինչև ցարդ եղած յարձակմամբ, նոր յարձակումներ ընելու կը պատրաստուին. իսկ ըստ այլոց՝ որոշած են դադարիլ յարձակմանէ, լսելով որ նոյն կողմանց օսմանեան զօրութեանց ընդհանուր հրամանատարութիւնը Մէհմէտ Ալի փաշայի յանձնուած է։

Իսկ Յունաստանի վերջապէս ի՛նչ ընելը դեռ չգիտցուիր. և շատ հաւանական է, որ այսուհետև որոշ տեղեկութիւն առնուի, քանզի ազգային խորհրդարանը բացուեցաւ։ Տեսնե՛նք, թէ ժողովուրդն ու խորհրդարանը մէկ մէկու համամիտ կդտնուի՞ն։

***

Ռուսք Ռումէլիի կողմը շատ մը կողմերէ հետազօտութեան ելած ըլլալով՝ ինչպէս կհաւաստեն պաշտօնական հեռագիրք, կդուշակուի թէ մօտերս յարձակումներ պիտի ընեն Օսման և Սիւլէյման փաշաներու վրայ։

Այս անդամ Օսման փաշայի կողմանէ հոկտ. 11 թուով քաշուած հեռագրէ մը կիմացուի, ըսած էր երէկ Վ.ագբթ, թէ հոկտ. 7ին պատերազմին մէջ, բաց ի ռուսաց, ռումանիացիք 5–600 հոգի կորուսած են, մինչդեռ օսմանցիք 10ի չափ վիրաւորէ և 4–5 մեռեալէ զատ կորուստ ունեցած չեն, ամրութեանց մէջ գըտնուելնուն պատճառաւ։

Վագբթ գրած է այս առաւօտ։

«Դանուբի վիճակին մէջ Գատը գիւղ առջի օրը տեղի ունեցած պատերազմին մէջ ռուսք արդարև 800էն աւելի կորուստ ունեցեր, և պատերազմին դաշտը անոնց դիակները դետինը փռուած տեսնուեր է։

«Անատօլիի կողմին դալով՝ Իսմայիլ Հագգը փաշա՝ Մուխթար փաշայի հետ միանալու խիստ մօտ է, և Մուխթար փաշա խիստ ընտիր և անդորր դիրքի մէջ կդտնուի։»

Ցար տիւ Պոսֆոր կգրէ։

«Ռուսք Կարսի առջեւ իրենց յաղթութենէն ի վեր, մեծ փոյթ ունին։ Կարսի և Կարնոյ մէջ հեռագրական գիծերը աւարեր են։ Իսմայիլ Հագգը փաշայի բանակն բաժնելու աշխատեր են։ Դաշտային թնդանօթներով Կարսի վրայ կրակ ընելով՝ աճապարանօք պաշարման թընդանօթներ բերեր են Աղեկսանդրապօլէն։ Հաղէր-պօղաղը և Սօղանլրի մէջ տեղը գտնուած Ահմէտ-Մուխթար փաշայի զօրաբաժինն ալ ցրուել ուզեր են. բայց Կարսի միայն մէկ կողմը պաշարել կրցեր են։

«Ռուսք չեն յաջողեր՝ Մուխթար և Իսմայիլ փաշաներու վրայ ըրած յարձակ-

ման մէջ։ Ռուսաց դժուարին է՝ բոլորովին պաշարել Կարսը. իսկ դէպ ի Կարին յառաջանալը՝ ներկայ եղանակին մէջ կարելի չէ։

«Բուլմէլիի կողմը անցնելով՝ դէպ ի Ուրխանիյէ եղած յարձակմունքէն կմակաբերուի, թէ Թօթլեպէն զօրավարին յատակագիծն է՝ Բլէվնան պաշարել և անօթութենէ անձնատուր ըլլալ հարկադրել։ Ուրխանիյէի գրաւմամբ կարելի է՝ Բլէվնայի հաղորդակցութիւնը կտրել. բայց Շէվքէթ փաշա Կուրբօ զօրավարին յարձակումն մեծաւ յաջողութեամբ ի դերև հանած ըլլալով՝ Ուրխանիյէի ճանապարհը Բլէվնայի համար բաց է։»

Պրէնտիզիի թղթատարով եկած հելլենական լրագրաց մէջ Ռուսիոյ երկու պաշտօնական հեռագրերը տեսնուած են։

«Պուքրէշ. 5/17 հոկտ։ — Կարսի յաղթութեան մանրամասնութիւնք են։ Մուխթար փաշայի բանակին մէկ մասը յաղթուեցաւ ցրեցաւ, և քանի մը հազար հոգի ու 4 թնդանօթ մեր ձեռքը ինկան։ Բանակին միւս մասն ալ՝ որ 3 զօրաբաժնէ (ֆըրդա) կրաղկանար և 35 թնդանօթ ունէր, պաշարուելով՝ հոկ. 3/15 ին անձնատուր եղաւ 6 փաշաներով։ Թշնամւոյն կորուստը շատ է։ Մուխթար փաշա Կարս քաշուեցաւ»։ Կորչադոֆ

Երկրորդ հեռագիրն Գարապալէն քաշուած է հոկտ. 4/6 թուով։

«Մուխթար փաշայի բանակը երկուքի բաժնուեցաւ։ Ալ թիւը փախաւ. ձախը անձնատուր եղաւ։ Ռուսիացիք 7 փաշա դերի առին և 32 թնդանօթ գրաւեցին»։

(Մեր նախորդ թերթին տեղեկութիւնները կարդացողը կրնայ մակաբերել, թէ այս հեռագիրները աճապարանօք քաշուեր են. այսինքն առանց սպասելու՝ պատերազմին վախճանին։)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգղ. դեսպանն երէկ մեծ եպարքոսին ապարանքն երթալով տեսնուելէն յետոյ, Նորին բարձրութիւնը կայսերական պալատը գնայ։

— Ֆիւշիւք-Զէքմէճէի և Պէրզօսի կողմերը երկու ամրութեանց շինութիւնն աւարտեր է։ Գրուբի թնդանօթներ պիտի զետեղուին սոցա մէջ, և պահպանութիւնը՝ Պօլսոյ կայսերական վաշտերուն պիտի յանձնուի եղեր։

— Բ. Դուռն այս օրերս Յունաստանի կառավարութեան գիր մ՚ուղղելով, աղդարարութիւններ բրեր է նորա զինուորական պատրաստութեանց և լրագրաց հրատարակութեանց համար։

— Պօլսոյ կայսերական վաշտերուն մէջ գտնուող արհեստաւորաց ոմանք չեն ուզեր եղեր վճարել իրենց արքունի հարկերը և ուրիշ տուրքեր։ Ասոր վրայ պատուէր դացեր է նոցա սպայից, որ այնպիսիներն յորդորեն վճարել իրենց պարտքը։

— Սիրիոյ կուսակալութեան վիճակին մէջ Լաղաքիոյ կողմերը գիւղօրէից ոմանց բնակիչք՝ չուզելով վճարել իրենց տուրքերը, և այս պատճառաւ ցոյցեր ալ ըրած ըլլալով՝ հինգերորդ բանակին հրամանատար Իզզէթ փաշա զօրք ղրկեր, և նոցա առաջնորդները պատժելով՝ բարեկարգութիւնը վերահաստատեր է։

— Եէնի-Զաղրայի դայմադամը պաշտօնանկ եղեր և պատժուեր է՝ Բլէվնայի կայսերական բանակին պիտոյքը անվնութութեամբ ետ ձգելուն համար։

— Սուլթանիյէ վարժարանին վերատեսուչ Ալի Սուավի էֆէնտի՝ որոյ կողմանէ Օսմանը լրագրոյն դէմ դատ բացուած ըլլալը ծանուցած եմք, այս անդամ հասարակաց կրթութեան պաշտօնեայ Միւնիֆ էֆէնտիի դէմ ալ բողոքելով ի պաշտօնէ՝ դատ պահանջեր է։

— Զինուորական վիճակագրութենէ ետ մնացող և զինուորական ուրիշ կարգերէ խոյս տուող և մայրաքաղաքս և ուրիշ դաւառներ թափառող զինուորները բռնել ու իրենց յատկացեալ բանակները ղրկելու հրաման եղեր է՝ որոց անկ է։

— Էտիրնէի նախկին կուսակալ Ալի փաշա Պրուսայի կուսակալ անուանեցաւ, և այս առթիւ օգոստ. Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ։

— Օգոստ. Սուլթանին բժշկապետ Մավրօեանի էֆէնտիի որդի Ալեկսանդր էֆէնտի կայսերական պալատն առնուեր է, օտար լեզուաւ գրութեանց և լրագրութեանց համար։

— Ամսոյս սկիզբները առագաստանաւ մը բազմաթիւ ճամբորդներով Այոս-Եօրկի կիրճէն ելնելով՝ դէպ ի Թուլչայի կողմը դացած ատենը, Մահմուտիյէ ըսուած տեղը ռուսաց զետեղած ծովառումբերուն հանդիպեր, և քիչ ժամանակի մէջ ծովասոյզ եղեր է։ Ճամբորդաց ոմանք կազատին եղեր, բայց պայթող ծովառումբը միւսներուն դիպելով՝ բոլոր ճամբորդք ալ չեն կրցեր ազատիլ։

— Հռչակաւոր Պ. Զարիֆի սեղանաւորը դաղղիացիի մը պնդեր է, թէ մինչև մէկ ամիս հաշտութիւն պիտի ըլլայ. դաղղիացին ալ ասոր հակառակ դաղափար յայտնելուն վրայ՝ դրաւ դրեր են մէջերնին. այսինքն՝ եթէ մինչև մէկ ամիս հաշտութիւն ըլլայ՝ դաղղիացին 5000 լիրա պիտի տայ Պ. Զարիֆիի, իսկ եթէ ընդհակառակն տեսնուի՝ Պ. Զարիֆի 50 000 լիրա պիտի վճարէ դաղղիացիին։

— Թարապիայի մէջ աղջիկ մը սունկէն (մանթար) թունաւորուեր և մեռեր է։ Ի զգուշութիւն կհրաւիրեմք, սունկ ուտելու սովորութիւն ունեցողները։ Պէտք է դիտնան, թէ ուրիշ շատ անդամներ ալ լսուած են այսպիսի դէպքեր։

— Գըղանլըգի Եանկընլի գիւղացի Տէլի-Եուվան անուն պուլղար մը հինգշաբթի առաւօտ կամրջին դլուխը կախուեցաւ։ Սա շատ խժդժութիւններ ըրեր է մահմետականաց և մասնաւորապէս կանանց ու աղայոյ դէմ։ Կըսուի, թէ արձակ համարձակ խոստովաներ է ըրածները՝ թէ՛ դատաւորաց և թէ՛ նոյն ինքն օգոստ. Սուլթանին առջև։ Կախաղան հանուած ատենը, չուանը բրդեր է, և իւվան աղաչեր է այլևս չկախել զինքը, սակայն լսելի չըլլալով՝ վճիռը դործադրուեր է։

Անդղիոյ թագուհին ծուատ շինելու զբաղած է՝ պատերազմի մէջ վիրաւորելոց համար, և նոյնը կընեն բոլոր պալատական և այլ ազնուազդի տիկնայք՝ հետեւելով Նորին վեհափառութեան օրինակին։

— Յունաստանի կայսրուհին՝ Ռուս բանակներուն համար 450 լիտր ծխախոտ և 90 լիտր մեղր ղրկեր է։

— Յունաստանի վախճանեալ Գանարիս ծովապետին հոգւոյն համար բարեմաղթութիւններ եղեր են՝ Պէլկրատի Մայր եկեղեցւոյն մէջ։

— Փարիզի մէջ Սերվիոյ համար 60 հազար ձեռք զգեստ կշինուի եղեր։

— Դանուբի ջուրերն առատանալ սկսեր են։

— Երէկ Պասիրէթ դրած էր, թէ Զայչարի (Սերվիա) ռազմամթերք կրակ առնելով՝ ոչնչացեր, և Վիտինէն ալ լսուեր է։

Երբեմն երբեմն մեր ընթերցողաց տեղեկութիւն տուած եմք, Անդղիոյ նախկին գլխաւոր նախարար Պ. Կլատսթընի ընդդէմ Թուրքիոյ բռնած հակակիր ընթացից վրայ։ Օսմանեան լրագիրք դրեթէ միշտ այս անձին դէմ կխօսին և նորա արարքն, ընթացքը ու հրատարակութիւնները կդատափետեն։ Արդ՝ այս անդամ Սէլանիկի Զէման անուն գաւառական լրագրին մէկ յօդուածը տեսանք երէկ Օսմանլը լրագրին մէջ, որով խիստ հետաքրքրական տեղեկութիւններ տրուած է Կլատսթընի վրայ։

«Զրոյց կայ» ըսած է Զէման, «թէ «Կլատսթընն բնիկ անդղիացի չէ, այլ «բնիկ Պուլղար է։ Քէօսթէնտիլի ձա«ըօվա անուն պուլղար գիւղին մէջ ծը«ներ է 1796 ին, խոզի առուտուր ընող «Ֆէսթուրի անուն Զօրպաճիի մը սպա«սաւոր Տիմիթրի անուն պուլղարէ մը։ «Մինչև 16 տարեկան եղած ատենը, հո«րը արհեստովն հորը օգներ, և խոզա«բածութեան ժամանակ, արածած խո«զերուն տիրոջը 13-14 տարեկան աղջի«կան կուսական պատիւը բռնաբարեր «և գիւղին մէջ չկրնալով կենալ այնու«հետև՝ Սերվիա փախեր, տեղւոյն աղ«նուականաց մէկուն քով սպասաւորու«թեան մտեր, և տիրոջը կողմանէ Լոնտո«նի ծախած խոզերը տանելու առթիւ՝ «Լոնտոն ինկեր է։ Հոն օ՛րևէ կերպով «գործ գտնելով՝ բնիկ Պուլղար անունը «կլատսթընի փոխեր, և բաղդին բեր«մամբ Անդղիոյ մէջ մեծ ազդեցու«թեան տէր ըլլալով՝ մինչև գլխաւոր նա«խարարի պաշտօն բարձրացեր է։

«Կլատսթընն, որչափ մարդկային ա«ռաքինութիւններէն հեռի է, նոյնչափ «ալ ոսկին կպաշտէ, և ոսկիի համար «մինչև իսկ Ս. Մարիամայ համար զեր«պարտութիւն ընել չամաչեր։

«Օսմանեան կառավարութիւնը եր«բեմն խոստացաւ Կլատսթընի՝ Թուր«քիոյ դանձային բարեկարգութեան «գործը յանձնել 50 հազար անդղ. լիրա «ամսականով. բայց յետոյ հարկ եղաւ «չընդունիլ։ Ասոր վրայ, քսակը չմտած «լիրաներուն կարօտութիւնը իւր պուլ«ղարական բնաւորութեանը վրայ աւել«նալով՝ օսմանեան կրօնին ու տէրու«թեան դէմ ծանուցեալ թշնամութիւն«ներն հրատարակել սկսաւ, և դեռ կը «շարունակէ։

«Իւր չափազանց ագահութեանն հա«մար է, որ ոսկան (ալթուն կէօզ) մա«կանունը կը տրուի»։

Ցիշեալ Զէման լրագիրն՝ Կլատսթընի դիմադրութիւնն ալ ընելով, նորա ոգւոյն ու մտաց ճշդիւտ նկարագիրն է, կըսէ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Պուքրէշ. 25 Հոկտ։— Վերջերս Պուլղարիոյ կողմը հետազօտութիւն մ'եղած ատեն, Լայսթէմպէրկի իշխանը մեռեր է։ (Ռուսիոյ կայսեր քեռորդին)

Մարսիլիա. 25 Հոկտ։— Սուլթան անուն զրահաւորն՝ Էտիմպուրկի դքսուհին մէջն ըլլալով՝ Մարսիլիայէն մեկնեցաւ Մալթա երթալու համար։ (Էտիմպուրկի դքսուհին՝ Անգղիոյ թագուհւոյն հարսը, և Ռուսիոյ կայսեր դուստրն է) Օզպօրն անուն շոգենաւն ալ Սուլթանին ընկերացաւ։

Դեռ հոս է Միտհաթ փաշա։ Ութ օր ալ կենալէն յետոյ, Նարոլի պիտի երթայ ձմերէ։ Միտհաթ փաշա այցելեց Էտիմպուրկի դքսին։

Վիէննա. 24 Հոկտ։— Դեռ վերջացած չէ՝ Աւստրիոյ և Գերմանիոյ կառավարութեանց մէջ առեւտրական դաշնադրութեան մը համար բացուած բանակցութիւնը,

Կըսուի, թէ Պոլսոյ անգղիական նախորդ դեսպան Ս. Հէնրի Էլիոդ Վիէննայի դեսպան պիտի անուանի։

Բէյրթի մէջ գրաւեալ երկաթուղւոյ երկաթգաւազանները յանձնուեցան։

Պերլին, 24 Հոկտ։— Կէս-պաշտօնական լրագիրք կ'յայտարարէն, թէ Գերմանիոյ կառավարութիւնը՝ Գաղղիոյ ազատ հասարակապետութեան վրայ կրնայ վստահիլ։

Լոնտրա. 24 Հոկտ։— Ալի փաշա մեռաւ Ռուսիոյ Օրէլ քաղաքին մէջ։ (Արտահանի անցքին ժամանակ դերի բռնուած Մերիլիվա Ալի փաշա ըլլալու է։)

Տէյլի-Նիուզ լրագրին հեռագրուած է Վիէննայէն, թէ Ռուսիոյ կառավարութիւնը ձըմրան համար շատ բալխիր (գըզագ) ապսպրած է, և Ռուսիոյ խորերը 91 գունդ ձիաւորք պատերազմիկ վիճակի մէջ դրուած են։

Փարիզ. 24 Հոկտ։— Ամերիկայի նախորդ նախագահ Կրանդ զօրապետն՝ այս երեկոյ Փարիզ հասաւ։

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ասաքիրի շահանէ սարաճխանէ անպարընա, տարը շուրատա մահֆուզ պուլունան նումունէսի վէճհ իլէ միւպայեա օլունաճագ օն պին դբյէ իզմիտ իմալը ոիյահ եաղլը քէօսէլէնին՝ թարիխի գօնթրաթտան իթիպարէն պէհէր մահ պէշէր պին դբյէսի թէսլիմ օլունարագ իբի մահտէ արգասը ալընմագ, վէ պէհասը մագպուզ սէնէտլէրի թարիխինտէն իթիպարէն օթուզ պիր կիւն միւրուրինտէ սիմ մէճիտիյէ երկիրմի ղուրուշա, վէ մէճիտիյէ վերիլմէզսէ՝ Պօրսա ֆիյաթը իլէ պիլհիսապ ֆէրդի իլէ պերապէր գայիմէ օլարագ վերիլմէք շարթը իլէ պէհէր դբյէսի երկիրմի ալթը պուչուգ ղուրուշա թալիպի էօհտէսինտէ օլուպ թըշրինի եվվելը բումինին օն եէտինճի պաղար երթէսի կիւնիւ գարարը գաթիսի վերիլէճէյինտէն՝ իթա իթմէյէ թալիպ օլանլէրին եէվմի մէղքիւրտէ տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

13 Թըշրինի եվվել 1877

Պապը Սէրասքէրի

—

Ասաքիրի շահանէ լէվազիմաթը իչին, միւթէահիւտլէրի թարաֆլէրինտէն գօնթրաթօլէրինէ մահսուպէն էլպիսէ անպարընա կէօթիւրմէքտէ օլարգլէրի հէր նէվի չուհա վէ սայիրէտէն էվրօբատան կէլէճէքլէրին կէօմրիւկտէն իխրաճընտա պալեալէրի աչըլմայարագ կէօթիւրիլուպ անպարընտա անպար մէմուրը վէ մուայէնէճիլէր հաղըր օլտուղը հալտէ էմանէթ մաղազասընտա քիչատ իտիլմէսի, վէ չայէտ իչէրինտէ աչըգ պօղուգ պալեա ղուհուր իտէրսէ գապուլ օլունմամասը, վէ մէղքիւր էմանէթ մաղազասընտա սալիֆ էզգիքր մէմուրլէր հաղըր օլմատըդճա, թիւճճարտէն գաթիլէն մաղազայա տուխուլ իտէմէմէսի, վէ իշպու չուհա վէ սայիրէ մէմուրինի միւմայիլէ յհիւմ մուվաճէհէսինտէ անալիզ իտիլմէտիքճէ անպարը մախսուսէ վաղ գբլընմամասը գատիմտէն պէրու ուսուլը միւթթէխէզէսի իճապընտան օլմաղլէ՝ քէյֆիյէթ միւթէահիւտին մալիւմիլիի օլմագ իւզրէ իլան վէ իշայէ օլունմըշտը։

4 Թշրինի եվվել 1877

Պապը Սէրասքէրի

—

ՏԻԲԱՐԴԱՑ

ՃԱՌ ՈՃՈՑ

ԵՒ ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ

Լոսրիրդաճուրիւն

Տէքարդ դաղղիացի մեծանուն փիլիսոփային Գլուխ գործոն է, որ Մեծ. Առաքել Շարապխանեանի աշխատասիրութեամբ հայերէնի թարգմանուելով, Արմաշու վանքէն հրատարակուեցաւ դեղեցիկ տպագրութեամբ։

Այս ընտիր գիրքը 272 երեսէ կը բաղկանայ և կը ծախուի Եէնի-ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

ԹԵՍԱՒՐՈՍԻ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Այս պատուական գիրքը այս անդամ շնորհիւ դեր. Խորէն եպիսկոպոսի Մխիթարեան դրաբարէն համառօտութեամբ աշխարհաբարի թարգմանուելով Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայեցաւ մաքուր տպագրութեամբ, Ցուսալի է որ այս անմահ գործը մեծ ընդունելութիւն պիտի գտնէ ազգային վարժարաններէն և ընթերցասէր հասարակութենէն։

Գիրքը կազմեալ 316 երեսէ բաղկացած ըլլալով կը վաճառի Եէնի-ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 3 ֆրանք

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ

Վ. ԾԱՆՆԻ

Բերա Մեծ փողոց Ադամամի թիւ 77

Ե ԻՆ

Կ։ Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարաւոց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և դնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Մակի մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆն. լաէթնէյնն, որ փոքրիկ ոբի տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գըլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև։

Քոտֆո (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սընֆիլոպը Գէնէն, զուտ և մաքուր, Բէլթիէ, Տիոպօսք, Ժօպսթ և Էվանս Լէղէճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Զկոն ֆոլ, զուտ Գրիսթիանայի Բէթկէր Մէլլէրի գործարանէն ելած։

Եղէրդէ (հինտիպա) խոհոռ, Լուտվիսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող որ հաստակ խահուէի հետ խառնելով դինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Աբսոլիսպոկան սաասոյց ամեն ժամու մէջ։

Տէնժէնի ջոր, մաղերու անվրիպելի ներկ։

PILULES AHOOLWLY

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուժուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, դլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու։

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պայսամական յատկութեանցը չհաւաւարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիպէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորսվին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հաղի, սրտի բաբախման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մանաւորապէս Պահճէ-գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն աջթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց Թիւ 533։

ՊԱՅՄԱՆՔ ՓՈԻՆՋԻ

1.—Փունջը ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիա՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 60 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի ուժան կըլլայ աւելի անգամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, կ. Պոլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ Թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆՆԵՐ

Բիզա փաշա խան թիւ 3